

արարքներ գործեն, զէնքի տակ չը գտնուած ատեն դատուին սովորական դատարաններու առջև:»

Համիտիէներու կազմութիւնն ու անոր շարունակութիւնը՝ ղինուորական, քաղաքական և տնտեսական կնճռոտ խնդիր մը դարձած է թէ տեղական ժողովուրդներու, թէ պետութեան, և թէ քիւրդ ցեղերու համար:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԻՒՐԴԵՐԸ

Յեղափոխութիւնը Հայերու մէջ շատ հին ժամանակներն ալ գոյութիւն ունեցեր է միշտ՝ իրրեւ ազգի մը յատուկ նկարագիրներէն մէկը. Հայ պատմութիւնը այդ գծով ուսումնասիրողները պիտի որոշ կերպով նկատեն՝ որ այդ արտայայտութիւնը դանազան ժամանակներու մէջ եղեր է է քե բուռն եւ քե մեղմ, քե սննահասակն եւ քե հաւաքական, բայց Յեղափոխական կեանքի նախնական վիճակներու մէջ:

Հայկական Յեղափոխութեան այդ պատմական գծերու վրայ մենք կը գտնենք և Քիւրդերը:

Դեռ 1704 թուականին՝ Իսրայէլ Օրին որ Հայկական անկախութեան գաղափարով անհատական ձեռներէցութեամբ կը գործէր, իր դաշնակիցներու մէջ առած էր և Քիւրդերը:

Մենք այս կէտը կը գտնենք Եղօվի Պետրպուրկ հրատարակած «Մնաչեհեա Պետրա Վէլիկովօ «Արմենակիմ Նարօգօմ» գրքին մէջ:

Ահա քաղուած մը Իսրայէլ Օրիի նամակէն՝ ուղղուած առ «Պֆալցի Կուրֆիւրստին».

«... Եւ որ նա, (Վրացիներու Պ.ն իշխանը) կը ցանկանար մտնել դաշնակցութեան մէջ նորին կայսերական վեհափառութեան հետ (Ռուսաց կայսեր համար է) ընդ միշտ. ինչպէս ձեր բարձր (կայսր) - ընտրող պայծառափայլութիւնը և իր կայսերական վեհափառութիւնը տեսան այդ՝ իր նամակնե-